

Հաստատված է Խաչատուր Աբովյանի անվան  
հայկական պետական մանկավարժական համալսարանի  
գիտական խորհրդի 2016թ. մարտի 30-ի նիստում

Գիտական խորհրդի նախագահ՝ Ռուբեն Միրզախանյան

## ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի  
նախապատրաստական բաժնի գործունեության

1. Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի (այսուհետ՝ Համալսարանի) նախապատրաստական բաժնի գործունեության հիմնական նպատակը համապատասխան ուսումնական հաստատությունների ավարտական դասարանների աշակերտների և սովորողների՝ բուհ ընդունվելուն նախապատրաստումն է: Համալսարանի նախապատրաստական դասընթացները կազմակերպում և համակարգում է նախապատրաստական բաժինը (այսուհետ Բաժին):
2. Նախապատրաստական դասընթացների ունկնդիր ձևակերպվելու համար դիմորդները ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը՝
  - 1) անձը հաստատող փաստաթուղթ,
  - 2) 2 լուսանկար (3x4 չափի),
  - 3) ուսման սահմանված վարձի վճարման վերաբերյալ անդորրագիր:
3. Նախապատրաստական դասընթացների ունկնդիրների համար կազմակերպվում են երկարաժամկետ (ութամսյա) և արագացված (եռամսյա) դասընթացներ:
4. Համապատասխան դիմումներն ընդունվում են մինչև դասընթացները սկսվելը, ինչպես նաև դասընթացների ընթացքում:
5. Ութամսյա նախապատրաստական դասընթացները կազմակերպվում են յուրաքանչյուր ուսումնական տարվա հոկտեմբեր-մայիս, իսկ արագացված դասընթացները՝ ապրիլ-հունիս ամիսների ընթացքում: Նախապատրաստական դասընթացների ուսման վարձը սահմանում է Համալսարանի գիտական խորհուրդը:
6. Նախապատրաստական դասընթացներում ուսուցումն իրականացվում է դասախոսությունների, գործնական աշխատանքների և խորհրդատվությունների ձևով:
7. Ուսումնական գործընթացում ունկնդիրների գիտելիքները վերահսկելու համար կիրառվում են հետևյալ ձևերը՝ ընթացիկ ստուգումներ ուսման ընթացքում և ավարտական քննություններ:
8. Ունկնդիրների գիտելիքներն ստուգվում և գնահատվում են 20 միավորանոց սանդղակով:

9. Համալսարանի և ունկնդիրների (ներկայացուցիչներ) հարաբերությունները կարգավորվում են պայմանագրով:
10. Ունկնդիրների հետ կնքված պայմանագիրը Համալսարանը միակողմանի լուծում է, եթե նրանք խախտել են Համալսարանի ներքին կարգապահական կանոնները և պայմանագրի դրույթները: Նշված պայմանագիրը կարող է նաև լուծվել ունկնդրի նախաձեռնությամբ՝ Համալսարանի ռեկտորին համապատասխան դիմում ներկայացնելու միջոցով: Պայմանագրով կարող են սահմանվել լուծման այլ հիմքեր:
11. Նախապատրաստական դասընթացների ունկնդիրներն իրավունք ունեն՝
  - 1) Ստանալ որակյալ կրթություն՝ համաձայն ընտրված մասնագիտության
  - 2) Օգտվել համալսարանի նյութատեխնիկական բազայի ընձեռած հնարավորություններից
  - 3) Ընթացքում փոխել նախապատրաստման ուղղվածությունը:
12. Նախապատրաստական դասընթացների ունկնդիրները պարտավոր են՝
  - 1) Սահմանված ժամկետներում վճարել ուսման վարձը
  - 2) Սահմանված ժամկետներում կատարել բոլոր այն առաջադրանքները, որոնք նախատեսված են կրթական ծրագրերով
  - 3) Պահպանել համալսարանի կարգապահական կանոնները:
13. Նախապատրաստական դասընթացները վարում են համալսարանի պրոֆեսորա-դասախոսական կազմի ներկայացուցիչները: Նախատեսված լսարանային ժամերը հաշվառվում են ամբիոնի ուսումնական բեռնվածություններում կամ իրականացվում ժամավճարային հիմունքներով:
14. Նախապատրաստական դասընթացների ուսումնական ծրագրերի բովանդակությունն ու որակը ապահովելու նպատակով, ըստ հանրակրթական առարկաների, յուրաքանչյուր ուսումնական տարի ձևավորվում է փորձագիտական խորհուրդ, որը հրամանագրվում է համալսարանի ռեկտորի կողմից: Նշված փորձագիտական խորհրդի անդամների թեկնածուներին առաջադրում է ուսումնական գործընթացների հարցերով պրոռեկտորը՝ նախապատրաստական բաժնի հետ համատեղ:
15. Նախապատրաստական դասընթացի մասնակիցները պարտավոր են պահպանել Համալսարանի ներքին կարգապահական կանոնները, Բաժնի գործունեությունը կանոնակարգող ակտերը, ինչպես նաև Համալսարանի հետ կնքված պայմանագրերի պահանջները:
16. Նախապատրաստական դասընթացներն ավարտած դիմորդները հեռակա ուսուցման համակարգ կարող են ընդունվել դասընթացի ավարտական քննությունների գնահատականներով, ըստ մասնագիտությունների նախարարության հաստատած տեղերի մինչև 20 տոկոսի չափով: